ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Փանիկի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի Հայոց եկեղեցու պատմություն առարկայի ուսուցչի / 6 դասաժամ / թափուր աշխատատեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի։
Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում /Ձև 1/
-մեկ լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ /դիպլոմ/,
-անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն/Ձև 5/,
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք։
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023թ.-ի Հունիսի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10։00-ից մինչև 14։00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից։
Մրցույթը տեղի կունենա 2023թ.-ի հունիսի 29-ին՝ ժամը 12։00-ին, ՀՀ Շիրակի մարզի <<Փանիկի միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում։ Հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք, բնակավայր Փանիկ, 2 փողոց, շենք 2։

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094969636 հեռախոսահամարով։